ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀՈՂԻՆ

Առճակատումից դեպի վերակառուցման համար պայքար

Հրապարակվել է ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության հրամանագիրը Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում կառավարման հատուկ ձև սահմանելու մասին:

Բոլոր քաղաքական, սոցիալ-տնտեսական հարցերի լուծման գործում իշխանության տեղական մարմինների լիազորությունները դրվում են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Հատուկ կառավարման կոմիտեի վրա:

«Պրավդայի» խնդրանքով ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ, ՍՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ Արկադի Իվանովիչ Վոլսկին պատմում է, թե ինչով է թելադրված այդ որոշումը և ինչպիսի խնդիրներ են կանգնած Հատուկ կառավարման կոմիտեի առջև:

— Ընդունված որոշումն արտասովոր է: Այն նման չունի մեր պետության պատմության մեջ: Ձեզ թվաց, ընդհուպ մինչև վերջին ժամանակներս հույս կար, թե՝ Ադրբեջանում և Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում կգտնվի խելամտություն, առողջ ուժերը կկարողանան հաշտության հասնել: Ցավոք, դա տեղի չունեցավ: Ամբողջ տարվա ընթացքում այդ ռեգիոնում ազգամիջյան երկպառակությունը շարունակում էր սրվել, իսկ տարվա վերջին ամիսներին բացահայտ ընդհարումների բնույթ ստացավ: Ավելի քան 200 հազար մարդ թե Հայաստանից, թե Ադրբեջանից հարկադրված էին հեռանալ իրենց տներից, թողնել իրենց աշխատանքը, բնակության վայրերը, մշակած հողերը: Խելացի, ընդունակ մարդիկ, լավ հարևաններ հալածվում էին միայն նրա համար, որ այլ ազգության են պատկանում: Բանականության հսկողությունից դուրս էին գալիս և զանգվածների մեջ արմատավորվում անհանդուրժողականությունն ու անգամ դաժանությունը: Բռնության մոլուցքը դադարեցնելու համար հարկ եղավ ձեռնարկել խստիվ միջոցներ, մի շարք շրջաններում հատուկ դրություն մտցնել: Եվ ահա հիմա, փոխադարձաբար ընդունելի խելամիտ փոխզիջման հիման վրա, որպես հարկադրական միջոցառում ստեղծվել է ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտե:

Իհարկե, հեշտ չի լինի երկու ժողովուրդների միջև վերականգնել բարեկամությունն ու վստահությունը: Շատ է մեծ փոխադարձ վիրավորանքների հաշիվը, շատ է բարդ նվաստացումների ու վիրավորանքների դառնությունը: Դրանք, ինչ խոսք, չեն մոռացվել: Բայց երկպառակության պահպանումը կարող է տանել ոչ թե դեպի երջանկություն ու արդարություն, այլ դեպի անդունդ: Հանդիմանությունների ու մեղադրանքների կոմպանիան չօգնեց լուծել ոչ մի պրոբլեմ, իսկ գժտությունների շարունակումը միայն նոր տառապանքներ ու զրկանքներ է բերում երկու ժողովրդին էլ:

Ո՞ւմ էին ուզում պատժել գործադուլների, զանգվածային անկարգությունների կազմակերպիչներն ու ոգեշնչողները: Պետությա՞նը, կառավարությա՞նը, թե՞ ժողովրդին: Լեռնային Ղարաբաղն անգամ Ադրբեջանի կազմում տալիս է համախառն արտադրանքի ընդամենը 2—3 տոկոսը: Այնուամենայնիվ, ո՞ւմ պատժեցին: Նախ և առաջ բանվորների ընտանիքներին, որոնք ամիսներ շարունակ աշխատավարձ չստացան: Ձեռնարկությունների աշխատավորական կոլեկտիվներին, որոնք միլիոնավոր ռուբլիներով վնասներ կրեցին, խրվեցին պարտքերի մեջ, ուշացրին վերակառուցումը, կտրեցին տնտեսական կապերի գծով պարտնյորների վստահությունը: Ամբողջությամբ վերցրած մարզին, որը ձախողեց սոցիալ-տնտեսական զարգացման իր բոլոր պլանները:

Երբեմն հարկ է լինում լսել. մենք պայքարում ենք մեր ազգային պահանջների իրականացման օգտին, մեզ համար սոցիալ-տնտեսական լուծումները կարևոր չեն: Դե, ինչ արած, եկեք մտորենք. իսկ առհասարակ ի՞նչ է իրենից ներկայացնում ազգային շարժումը, ինչի՞ց է այն ծնվում և ինչի՞ց սնունդ առնում:

Մարդն իր ազգությունը վիրավորված, նվաստացած է համարում ոչ այն ժամանակ, երբ նրան շրջապատում են մաշկի այլ գույն ունեցող, այլ լեզվով խոսող, այլ կրոն դավանող մարդիկ: Եթե դա այդպես լիներ, անհնար կլիներ բազմազգ կոլեկտիվների, քաղաքների գոյակցությունը, բոլորը կփակվեին իրենց ազգային բներում: Բայց չէ որ այդպիսի բան չկա: Այնպես որ բանն ինչ-որ էթնիկական կամ պատմական արմատները չեն: Ազգային շարժումը առաջին հերթին երևան է գալիս այնտեղ և այն ժամանակ, որտեղ և երբ խախտվում է սոցիալական արդարությունը: Երբ մի ազգության ներկայացուցիչների համար կյանքում ստեղծվում են արտոնյալ պայմաններ, առանձնաշնորհումներ, իսկ մյուսի համար՝ ընդհակառակը, ամեն տեսակ խոչընդոտներ են հարուցվում նրա լեզվի ու ավանդույթների, կրթության և պրոֆեսիոնալ առաջընթացի զարգացման գործում:

Հիշենք թեկուզև, թե ինչպես ծագեց ու զարգացավ ղարաբաղյան շարժումը: Ինչո՞ւ մարդիկ առաջադրեցին Հայաստանի հետ միավորման հարցը: Որովհետև տեսնում էին, որ Ադրբեջանի նախկին ղեկավարությունը մարզն ավելի ու ավելի շատ էր փակուղի մտցնում, ձգտում էր խզել հայ բնակչության բնական կապերը Հայաստանի հետ մշակույթի, լեզվի ասպարեզում, որոշակի խոչընդոտներ էր հարուցում հայախոս մտավորականության ճանապարհին: Այս ամենը իրականություն է: Այս ամենը ճիշտ է: Երկրում շրջագայելիս ես ոչ մի տեղ այդպիսի բարձիթողի վիճակ, մարդկանց բախտի նկատմամբ քամահրանք չեմ տեսել, ինչպես Լեռնային Ղարաբաղում:

Ահա այն սոցիալ-տնտեսական հողը, որի վրա աճել էր ազգային պահանջների ծառը: Բայց չէ որ այդ դեպքում ակնհայտ է նաև այլ բան. որպեսզի ծառը սկսի սնվել այլ հյութերով, հարկավոր է փոխել հենց հողը՝ աշխատանքի, կենցաղի, հանգստի, պայմանները, բուն կյանքի մթնոլորտը: Հենց այստեղից էլ բխում է ՍՄԿԿ Կենտկոմի այնքան հաստատակամ ու հետևողական դիրքորոշումը, վերացնել այն սոցիալ-տնտեսական անհարթությունները, որոնք Լեռնային Ղարաբաղի բնակիչներին հնարավորություն չէին տալիս իրենց զգալ որպես լիարժեք, հարգանք վայելող քաղաքացիներ:

Ինչպես հայ, այնպես էլ ադրբեջանական ժողովուրդների իսկական ողբերգությունն այն է, որ սոցիալական արդարության համար պայքարի զուլալ գործին պղտոր առվակներով սկսեցին խառնվել ազգայնական սկզբունքները: Փոխանակ խիստ կերպով, ինչպես պահանջում է վերակառուցումը, ինչպես կոչ է անում կուսակցությունը, պատասխան պահանջելու աշխատողներից, փոխանակ ի հայտ բերելու և պատասխանատվության ենթարկելու իրենց միջավայրի անբաններին, այս միակ ճշմարիտ ուղու փոխարեն սկսեցին փնտրել արտաքին թշնամի, նրա վրա բարդել բոլոր վիրավորանքների ու սխալների մեղքը, նրան վերագրելով բոլոր չարիքների արմատները: Պատմությունը քիչ օրինակներ չգիտի, երբ խաբված ժողովուրդն իր նյարդայնությունն արտահայտել է չարով ու անկարգություններով, մեղքը «այլածիններին» վրա գցելով: Բայց դեռ երբեք նման ճանապարհը լավ վախճանի չի հանգեցրել: Եվ նա, ով չարիքն օգտագործել է սեփական նպատակներով, ինքն է նրա զոհը դարձել: Անցյալ տարվա նոյեմբեր-դեկտեմբերի իրադարձություններից կարելի է համոզվել, թե վերակառուցմանը, նորացմանն ու մաքրմանը ինչպիսի կատաղի դիմադրություն էին ցույց տալիս Ադրբեջանի և Հայաստանի մութ ուժերը՝ ստվերային էկոնոմիկան, կաշառակեր խավերը, մաֆիան: Նրանք չէ որ իրենց ժողովուրդներից էին հենց թալանում անզգաբար, էլ ինչպես նրանցից հոգատարություն և ուշադրություն սպասել մարդկանց կարիքների նկատմամբ:

Բայց չէ որ կա նաև այլ, վերակառուցման ծնունդ հանդիսացող բան: Ինչպե՞ս կարելի է չտեսնել, թե ինչպես են հանրապետությունների նոր ղեկավարները եռանդուն ջանքեր գործադրում վերակառուցման պրոցեսների արագացման ու խորացման համար: Եվ եթե ժողովուրդը, կոմունիստները չպաշտպանեն այդ ջանքերը, վերակառուցումն այստեղ շնչահեղձ կլինի: Կարող են գերիշխել նրա հակառակորդները:

Դժվարն ու ամենադժվարինն այն է, որ կաշառքի մեջ խրված տարրերը, մաֆիան իրենց հիմնական հենակետը գտել են ոչ միայն ոչ պաշտոնական միավորումներում: Նախ և առաջ նրանք սերտաճել են պետական, սովետական, իսկ երբեմն էլ կուսակցական ապարատի հետ: Շոշափուկներն այստեղ շատ խորն են: Այդ մթին ուժերը իրենց կադրերը խցկել են բոլոր էշելոնները, տոն են տվել երկու հանրապետություններում էլ: Հենց նրանք են տարիներ շարունակ շովինիստական պրոպագանդա մղել, բորբոքել հասարակական կարծիքը, յուրաքանչյուր մարմրող ածուխից հրդեհ բորբոքել: Հենց նրանք են ձգտել ստեղծել այնպիսի իրադրություն, որ իրենց ի սպաս դնեն թե ազգային, թե կրոնական զգացմունքները, խլացնեն հրապարակայնությունը, դեմոկրատիան: Հետևողականորեն ստեղծվում էր այնպիսի մթնոլորտ, որը բացառեր պրոբլեմի ամեն մի փոխզիջողական կարգավորում: Այդ գործամոլները պետք է կուսակցության և երկրի ուժերը շեղեին վերակառուցումից, կարգուկանոնի հաստատումից, խարդախներին ու գողերին մերկացնելուց: Ցավոք, շատ բանում նրանք գերազանցեցին սպասելիքները: Մենք համոզված ենք, որ թե Հայաստանում, թե Ադրբեջանում առողջ ուժերը ընդունակ են շտկել իրավիճակը: Այսօր յուրաքանչյուր ոք, ով ազնիվ է, պետք է համախմբվի վերակառուցման դրոշի ներքո: Իմ կողմից կարող եմ հավաստիացնել, որ մենք ըմբռնումով ու հարգանքով ենք վերաբերվում ժողովրդական շարժման նախաձեռնողներին, պատրաստ ենք համագործակցել ինքնագործ, հասարակական միավորումների ու կազմակերպությունների հետ ամեն տեղ, որտեղ խոսքը վերաբերում է կյանքի նորացմանը, մեր հասարակության մաքրմանը, սոցիալիստական իդեալների պաշտպանությանը:

Դա կլինի ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի գործունեության գլխավոր սկզբունքներից մեկը: Դրա ստեղծմամբ մարզն ըստ էության ինքնակառավարում է ձեռք բերում պլանավորման, նյութատեխնիկական ապահովման, կադրային ու հատուկ հարցերի լուծման ասպարեզում: Ընդ որում Կոմիտեի ստեղծումը չի սահմանափակում մարզի ինքնավարությունը և Ադրբեջանական ՍՍՀ-ին նրա տարածքային պատկանելիության փոփոխություններ չի նշանակում: Ընդունելով նման որոշում, ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահությունը հաշվի է առել, որ այստեղ հասունացած հարցերն այնպիսի ընդգրկում ու սրություն են ստացել, որ դրանց լուծումը անհնար է միայն Ադրբեջանի կամ Հայաստանի ուժերով: Հայաստանի հնարավորությունները, ինչպես գիտեք, առհասարակ առաջիկա տարիներին խիստ սահմանափակ կլինեն դեկտեմբերի 7-ի ահավոր երկրաշարժից հետո:

Նախքան Կոմիտեի խնդիրները բնութագրելը, ուզում եմ ասել, թե ինչու այս անգամ էլ կուսակցությունը վճռականորեն և միանշանակ հանդես եկավ տարածքի վերաձևման դեմ:

Այս կամ այն ժողովրդին հողի դարավոր պատկանելիության ամեն մի պատմական վկայակոչում բացարձակապես անհիմն է: Դարեր շարունակ ժողովուրդները քոչել են, փոխել տարածքները, ապրել միասին: Կուլտուրայի մի շերտը մյուսի վրա է եկել: Այսօր իրողությունն այնպիսին է, որ մի ժողովրդի մշակութային հավակնությունները անհնար է լուծել առանց մյուսների կենսական շահերը և իրավունքները ոտնահարելու: Ընթանալ այդ ուղիով, նշանակում է երկպառակության և արյան նոր հորձանք առաջացնել:

Այնուհետև, առհասարակ ի՞նչ է նշանակում «սահմանը» մեր սոցիալիստական պետության պայմաններում: Դա պայմանական գիծ է, նշված քարտեզի վրա: Մեզ մոտ չկան և չեն լինի սահմանային և փակ ճանապարհներ երկրի ներսում: Եվ երբ արտասանվում են «սրբազան ամբողջականության», «ամեն մի թիզ, քար, ծառ, սար պահպանելու անհրաժեշտության» մասին, ապա հարցնենք վերջապես՝ ումի՞ց պաշտպանելու: Լենկթեմուրի հորդաների՞, սուլթանների՞, թե՞ ֆաշիստական զորքերի ասպատակություններից: Մի՞թե ամենուրեք մեր ոտքերի տակ սովետական հող չէ:

Վերջապես օրինաչափ է նաև այսպիսի հարցը. մի՞թե սահմանը պետք է բնորոշի ազգային հիմնախնդիրների լուծվածության աստիճանը միասնական և բազմազգ սոցիալիստական պետության մեջ: Անշուշտ, այս կամ այն ազգի, ազգության ձևավորված տարածքային ընդհանրությունը, նրա սահմանադրությունը, մշակութային ավանդույթներն ու բարքերը, նույնիսկ այդտեղ տիրապետող կրոնը՝ այդ ամենը ազգային կյանքի իրողություններ են, որոնց նկատմամբ ոչ ոք չպետք է ոտնձգություն կատարի: Բայց նույնքան էլ անվիճելի է, որ ներկայումս առանց բացառության մեր բոլոր հանրապետություններն ու օկրուգները բազմազգ են: Երկրի հինգ բնակչից մեկը՝ ավելի քան 60 միլիոն մարդ, ապրում է արմատական այլ ազգություն ունեցող հանրապետություններում և մարզերում:

Դժբախտ է լինում այն ժողովուրդը, որը պարփակվում է իր ազգության մեջ: Այդ է ասում թե՛ պատմության փորձը, թե՛ արդիականությունը: Արհեստական մեկուսացումը, ուրիշ մշակույթից ինքնասահմանափակումը առաջին քայլն են ժողովրդի հոգևոր աղքատացման ուղղությամբ: Ալեքսանդր Շիրվանզադեն իր հակատագրի մասին գրել է. «Ես ինքս էլ չգիտեմ, թե Սողոմոն իմաստունը ինձ անդրկովկասյան ժողովուրդներից որ մեկի թվին կդասեր: Ես ծնվել և պատանեկությունս անց եմ կացրել Ադրբեջանում, իմ ամբողջ գիտակցական կյանքն ու ստեղծագործությունը ընթացել են Վրաստանում, ծերությանս շրջանում ապրում եմ Հայաստանում և այստեղ էլ հավանաբար կմեռնեմ ու կթաղվեմ, բայց իմ սիրտը ի վիճակի չէ կտրվելու այդ երկրներից ոչ մեկից»:

Այս խոսքերի տակ կարող են ստորագրել հազար-հազարավոր հայեր, ադրբեջանցիներ, վրացիներ, քրդեր, լեզգիներ, ռուսներ, ուկրաինացիներ, և ուրիշներ, որոնք ապրում են այս հողի վրա: Պատմականորեն Լեռնային Ղարաբաղն էլ է օրրան եղել բազմաթիվ այլացեղ բնակիչների համար: Եվ եթե դարեր շարունակ հայ և ադրբեջանական ժողովուրդները այդտեղ ապրել են միասին համագործակցելով, այլ ոչ թե ոչնչացնելով միմյանց, ապա ուրեմն ինչքան անհեթեթ պետք է լինի սահմանազատումը մեր օրերում, ինչպիսի մշտնջենական ողբերգության կարող է այն վերածվել երկու ժողովուրդների համար:

Վ. Ի. Լենինը, որը անչափ նրբանկատ էր ազգային հարաբերությունների, հատկապես փոքր ժողովուրդների հանդեպ, միշտ էլ կտրուկ առարկել է ազգերի արհեստական տարանջատման, ազգային ինքնամեկուսացման դեմ: Նա, օրինակ, կտրականապես մերժել էր մշակութային-ազգային ինքնավարության, ըստ ազգությունների դպրոցական գործի բաժանման մասին նախագիծը, նման քայլերը անվանելով ազգամոլության ամենանրբացված, ուստի և ամենավտանգավոր ձևեր:

Մեր երկրում չկան, չեն լինի ազգային անջատավայրեր: Եվ Լեռնային Ղարաբաղի հողում միասին են ապրելու, միասին են աշխատելու, միասին են երեխաներ մեծացնելու և նրանց երջանկության մասին հոգալու հայերն ու ադրբեջանցիները, քրդերն ու ռուսները: Այլ ուղի չկա: Ղարաբաղի հողում խաղաղություն չի տիրի, մինչև որ չդադարեցվի հաշիվ մաքրելը:

Նորից դիմեմ Վ. Ի. Լենինին: Նա մի հիանալի խորհուրդ ունի դրա վերաբերյալ: Նա ընդգծում էր, որ ազգամիջյան վեճերում անթույլատրելի է հասնել ձևական հավասարության՝ ակն ընդ ական, ատամն ընդ ատաման: Ընդհակառակը, այստեղ արդարացված է անգամ անհավասարությունը, որպեսզի վիրավորվածների մեջ վերականգնվի վստահությունը. «Ավելի լավ է չափից ավելի զիջողականություն ու փափկություն ցուցաբերել ազգային փոքրամասնությունների նկատմամբ, քան կտրուկություն»:

Կարծում եմ, այս պատգամը պետք է ուղղել նախ և առաջ ուսուցիչներին, մտավորականներին, մասսայական լրատվության միջոցներին: Դադարեցնել բորբոքել մյուս ժողովրդի նկատմամբ թշնամանքի ու անվստահության հուրը: Դադարեցնել չափից դուրս և անխոհեմորեն գովերգել սեփական ժողովրդին, որովհետև դա նույնպես դեպի հայրենամոլություն, ազգամիջյան գժտություն տանող ուղի է: Եթե ձեր խոսքի մեջ բարություն չկա ուրիշ ժողովրդի հանդեպ, այն կվնասի նաև ձեր ժողովրդին:

Վերջին ժամանակներս մեր կյանքում հետզհետե ավելի հաճախ են սկսում վեր պարզվել ազգային հայրենասիրության դրոշներ: Խոսք չկա, իր ժողովրդի, հայրենիքի հանդեպ սերը սրբազան ու հիանալի զգացում է: Բայց սերը, այլ ոչ թե անմիտ աստվածացումը: Սերը, այլ ոչ թե անխոհեմ մոլեռանդությունը, երբ իր ազգին սկսում են ներկայացնել իբրև ամենախելացի, տաղանդավոր, ասես ընտրյալ:

Եթե մի ժողովուրդ իրեն ավելի լավ ու ավելի բարձր է համարում ուրիշներից, ապա դա հայրենասիրություն չէ, այլ ազգային սնապարծություն, գոռոզամտություն:

Մի՞թե անցած օրերին քիչ էին այն օրինակները, երբ գողին, բռնաբարողին, թալանչուն պաշտպանում էին արդարացնել միայն այն պատճառով, որ նա յուրայինն է, որ իր հանցագործությունները նա քողարկում էր «հայրենասիրական» վարագույրով: Արդարադատության համար չի կարող ազգություն լինել: Կարևորն այն է, թե մարդը չարագործություն արե՞լ է, թե՞ ոչ: Սա է ցանկացած իրավական պետության հիմքը:

Ես հարկ համարեցի կանգ առնել դրա վրա, որպեսզի վերստին բոլորին կոչ անեմ. եկեք ժողովրդական, վերակառուցողական շարժումը մաքրենք ամեն տեսակ փրփուրից, այն ամենից, ինչը խանգարում է գլխավոր նպատակին՝ մեր կյանքի բոլոր կողմերի նորացմանը: Անթույլատրելի է երկրի անգամ ամենափոքր ռեգիոնում վերակառուցումը ներքաշել քաղաքական բոյկոտի: Այն, ինչ տեղի է ունենում այստեղ, իսկապես բոյկոտ է: Այն բոյկոտում է վերակառուցման արմատական խնդիրները: Ժողովրդապետությունը, դեմոկրատացումը, ինքնավարությունը, տնտհաշվարկը, սոցիալական ոլորտի առաջնային զարգացումը:

Ստեղծված իրավիճակի համար պատասխանատվություն են կրում նախ և առաջ մարզի ղեկավարները: Նրանք սխալ գնահատեցին իրադրությունը, չկարողացան գործարական երկխոսություն հաստատել տարբեր շարժումների միջև, այն հանձնեցին ինքնակոչ ղեկավարների ձեռքը, չկարողացան ազգային զգացմունքները տանել ճիշտ ուղիով:

Այդ պատճառով էլ ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահությունը որոշում ընդունեց դադարեցնել իշխանության տեղական մարմինների լիազորությունները մինչև նոր ընտրություններ անցկացնելը: Նրանց ֆունկցիաները ժամանակավորապես հանձնվում են Հատուկ կառավարման կոմիտեին: Նրա տնօրինության տակ են անցնում կառավարման բոլոր թելերը մարզի տարածքում, ինչպես և կադրային բոլոր հարցերը:

Համառոտակի՝ Կոմիտեի հիմնական խնդիրների մասին:

Տնտեսության ոլորտում դա միութենական մինիստրությունների և գերատեսչությունների օգնության ներգրավումն է մարզի արտադրողական ուժերի արագացված զարգացման համար, ձեռնարկությունների, սովխոզների ու կոլտնտեսությունների արմատական վերակառուցման համար: Նախատեսվում է միջոցներ իրականացնել ձեռնարկությունները ինքնաֆինանսավորման ու տնտհաշվարկի պայմաններին փոխադրելու, վարձակալական հարաբերությունները, ընտանեկան և կոլեկտիվ կապալը լայնորեն ներդնելու համար: Անշուշտ, հարկ կլինի մարզին օգնել և՛ կենտրոնացված կապիտալ ներդրումներով, և՛ վարկերով, բայց հետագայում նա ապրելու է սեփական շահույթի հաշվին:

Սոցիալական ոլորտում կտրուկ մեծացվելու են բնակարանային շինարարության, առողջապահության, կրթության ու մշակույթի օբյեկտների կառուցման մասշտաբները: Մենք մասնավորապես նախատեսում ենք կտրուկ մեծացնել տեղական շինարարական տրեստի կարողությունները, ստեղծել շինարարական ինդուստրիայի սեփական բազա: Պետք է սեղմ ժամկետում նորոգել մի շարք ճանապարհներ և գցել նորերը, կարգավորել էլեկտրամատակարարումն ու գազամատակարարումը:

Տնտեսական, սոցիալական հարցերը լուծելիս կկողմնորոշվենք նախ և առաջ դեպի կենտրոնացված օգնությունը: Դրա համար էլ հենց ՍՍՀՄ պետպլանում ժողովրդատնտեսական առումով հատուկ տող է մտցվում ԼՂԻՄ-ի վերաբերյալ: Բայց, բնականաբար, կպահպանվեն նաև ավանդական տնտեսական կապերը Ադրբեջանի հետ: Այսօր դրանք խախտելը ինքնասպանություն է մարզի համար: Նման կարգի բոյկոտը հարված կլիներ ոչ թե Ադրբեջանին, այլ Լեռնային Ղարաբաղի բնակչությանը: Նման քայլերի կարող են կոչ անել միայն անպատասխանատու դատարկախոսները, որոնք ոչինչ չեն հասկանում տնտեսությունից:

Այլ բան է, որ արտաքին աշխարհի՝ ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Հայաստանի, Ռուսաստանի Ֆեդերացիայի, Ուկրաինայի և ուրիշների հետ Ղարաբաղի բոլոր կապերը պետք է փոխադրել իրավահավասար տնտեսական համագործակցության ամրակուռ հիմքի վրա: Ոչ թե վարչական մամլիչ, այլ կոոպերատիվ շահ՝ ահա նման հարաբերությունների ամրակուռ հիմքը:

ԼՂԻՄ-ի զարգացման ընդարձակ ծրագրի իրականացման գործում զգալի տեղ է հատկացվում մշակութային ոլորտին: Այստեղ իրականացվելու է բազմաթիվ կազմակերպությունների և հիմնարկների գործունեության խոր վերակազմում՝ թե՛ անմիջականորեն մշակույթի, թե՛ կրթության, դաստիարակության, կենցաղի կարգավորվածության և կենսագործունեության բնագավառում: Ըստ ամենայնի կընդլայնվեն կապերը Հայաստանի հետ, հատկապես մշակույթի, կրթության, արվեստի, կադրերի պատրաստման բնագավառում:

Նմանօրինակ մոտեցումը հավասարապես պետք է բնորոշ լինի նաև բնակչության ադրբեջանական մասին: Անարդարացի, անմիտ, պարզապես հիմարություն է կարծել, թե Շուշիի նույն բնակիչները չպետք է լայն ու բազմակողմանի ազգային կապեր ունենան Ադրբեջանի հետ: Դիմել դրան, կնշանակեր պարզապես շրջել ավազի ժամացույցը. առաջ հայկական համայնքն էր իրեն վիրավորված զգում և շարունակ նյարդայնանում, իսկ այժմ նույնպիսի աղբյուրի կվերածվեր ադրբեջանականը:

Այնպես որ երկու հանրապետությունների հետ բնակչության շփումները մենք և՛ կխրախուսենք, և՛ կզարգացնենք: Բայց Ղարաբաղի կյանքի արմատական հարցերը կարող են լուծվել միայն իր՝ մարզի բնակչության ուժերով: Այստեղ այդ աշխատանքում միավորվելով շահերի ու գործողությունների ընդհանրությամբ, մենք պետք է առաջ մղենք վերակառուցումը: Ուստի մարզը ինքնուրույն կլուծի այն ամենը, ինչ որ նա կարող է լուծել՝ կադրային հարցերից մինչև ինքնաֆինանսավորումը:

Այսպիսին է Կոմիտեի գործունեության ընդհանուր հենքը: Նմանօրինակ փորձ չկա: Դե ինչ, միասին այն ձեռք կբերենք, միասին կսովորենք նորը: Մի բան պարզ է. հսկայական աշխատանք պետք է կատարվի: Մարզը, նախ և առաջ նրա կուսակցական կազմակերպությունը, պետք է ՍՄԿԿ XXVIII կուսհամագումարին ընդառաջ գնա նորացված, ամրապնդված, հաստատապես վերակառուցման ուղին բռնած: Այդ նպատակին կարելի է հասնել, եթե գործենք համատեղ, համերաշխ, միավորենք բոլոր ջանքերը:

«Պրավդա»
15 հունվարի 1989 թ.

Խմբագրի տեղակալներ՝ 52—66—12, 52—66—